ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 8

« 27 » փետրվարի 2020թ.-ին կնքված N «ՎԱԲՏ-ՀՄԱ-ԾՁԲ-20/1-1» ծածկագրով՝
Պետության կարիքների համար հանրային հեռախոսային ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի

ք.Երևան « » հունվարի 2026թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ, վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Գ. Բոշյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն, Կորպորատիվ վաճառքների վարչության ղեկավար Կարեն Ասատուրյանի, որը գործում է 13.08.2025թ տրված լիազորագրի հիման վրա (նույնականացման քարտ՝ 014881320, տրված՝ 16.03.2023թ., 011-ի կողմից) (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, և Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը, ի դեմս մարմնի ղեկավար Հ. Մարտիրոսյանի (այսուհետ՝ Ծառայություն ստացող), բոլորը միասին՝ կողմեր հիմք ընդունելով «ՎԱԲՏ-ՀՄԱ-ԾՁԲ-20/1-1» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին.

1.1 Հաշվի առնելով, որ 2026թ. պետական բյուջեով համապատասխան ծառայությունների մատուցման նպատակով հատկացվել է 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին հաստատել ֆինանսական պարտավորությունները և վճարման ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի:

1.2 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում 2026թ-ի հունվարի 1-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև 2026թ.-ի դեկտեմբերի 31-ը:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև Համաձայնագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում մինչև Համաձայնագիր կնքելը կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումը իրականացվում է այդ Համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2.2 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.3 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.5 Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 հավելվածը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ	ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ
Վարչապետի աշխատակազմ ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 1 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011024040 ՀՎՀՀ 02505554	«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ ք. Երևան, Ազատության 24/1 «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Հ/Հ 163004038861 ՀՎՀՀ 02500052 Signed by: KAREN ASATURYAN 4010830662 Date: Fri, 16 Jan 2026 11:57:42 GMT+04:00	Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին ք. Երևան, Կորյունի 15 ՀՎՀՀ 02678934 Ստորագրող ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ 3212790148 2026-01-16 16:15:59 GMT+04:00 Հավաստված է էԼԵՆԿ-ի կողմից
----------	-	----------
(ստորագրություն)	(ստորագրություն)	*(ստորագրություն)*
Կ.Տ.	Կ.Տ.	Կ.Տ.

Digitally signed by BOSHYAN GARIK 1404880475
Date: 2026.01.19 11:21:44 AMT

Հավելված N 1
« 27 » փետրվարի 2020թ. կնքված
ՎԱԲՏ-ՀՄԱ-ԾՁԲ-20/1-1 ծածկագրով պայմանագրի
« » հունվարի 2026թ. կնքված N 8 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	64211100/1	Հանրային հեռախոսային ծառայություններ	12500	12500	12500	25000	25000	25000	37500	37500	37500	50000	50000	50000	50 000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024040
ՀՎՀՀ 02505554

(ստորագրություն)

Կ.Տ.

Digitally signed by BOSHYAN GARIK
1404880475
Date: 2026.01.19 11:22:08 AMT

ԿԱՏԱՐՈՂ

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ
ք. Երևան, Ազատության 24/1
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163004038861
ՀՎՀՀ 02500052

Signed by: KAREN ASATURYAN 4010830662
Date: Fri, 16 Jan 2026 11:58:21 GMT+04:00

(ստորագրություն)

Կ.Տ.

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ

Բնապահպանության և ընդերքի
տեսչական մարմին
ք. Երևան, Կորյունի 15
ՀՎՀՀ 02678934

Ստորագրող
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
3212790148

2026-01-16 16:16:40 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԿ-ի կողմից

(ստորագրություն)

Կ.Տ.